№ 46 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ 3 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1894 № 46

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ՇԱՒԻՂ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂԸ“ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան դինն է 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան. առանձին հրատարակները 5 շահի. արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 ռուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի: Թէհրանում գտնում են միմիայն խմբագրատան մէջ: Մեր հասցէն. Téhéran Rédaction CHAVIGH

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամը: Կիրակի եւ տօն օրերը 10—2 ժամը: Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 1 շահի:

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1895 Թ.

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ „ՇԱՒԻՂ“ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„Շաւիղը“ կը հրատարկաւի Թէհրանում (մօտաւորապէս կրկին մեծութեամբ) նոյն ծրագրով և նոյն ուղղութեամբ: „Շաւիղի“ բաժանորդագինն է մէկ թուման, կէս տարուանը վեց ղրան: Արտասահմանում՝ 3 ռուբլի կամ 8 ֆրանկ. կէս տարուանը 2 ռուբլի կամ 4 ֆրանկ:

Արտասահմանից դրամական ծրարները կարող են ուղարկել հետևեալ հասցէով՝ Черезъ Баку Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. А. Бекъ-Назарову. Իսկ նամակներ և թղթակցութիւններ հետևեալ հասցէով. Téhéran, Rédaction „CHAVIGH“.

Դավրէժում ցանկացողները կարող են դրուիլ Բաղդասար Մելիք Սարգսեանցի մօտ, Սալմաստում Յովհաննէս Ապրէսեանցի մօտ, Արտաբիլում՝ Յակոբ Էլչիբեկեանի մօտ, Նոր-Զուղայում Յովսէփ Բ.սրսեղեանցի մօտ, Բուշիրում՝ պ. Կ. Զէյնունեանի մօտ, Մարաղայում՝ Մելքոն Խալափեանցի մօտ Ռաշտում՝ Ալէքսան Յովսէփեանցի մօտ:

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունւում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինքնօգնութիւն է պէտք.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Մարաղայից. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլի Տեսութիւն. արտաքին լուրեր.—Յայտարարութիւններ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—Փայտակարան կամ Ղարադաղ:

Ինքնօգնութիւն է պէտք:

Ինչպէս կուզէիր, որ քեզնից լիովին հակառակ շահեր ունեցող մարդիկ հետաքրքրուէին քեզնով և ձեռք մեկնէին քեզ երբ ընկնում ես: Ազնիւ զգացումների, ասպետական վարմունքների դարն անցաւ, կաշու հարցն է այժմ որ գրաւել է ուղեղային ամբողջ ոյժը: Ընկէր, մեռէր որ քանոր կուզես, թէ մեռնելուցդ շահ ունին մարդիկ, հաւատա, նրանք էլ մի քացի կը տան քեզ որ աւելի շուտ մեռնես: Իսկ այն ինչ որ երբեմն ոգեւորում է անմիտների, այսինքն մարդկանց "հարցապնդումներ„ ու "բողոքներ„ քո անկման մասին, դա կեղծաւորութիւն է և գծուծ շահեր քողարկող մի կապկութիւն, որ աւելի զզուելի է, քան սառնասիրտ անտարբերութիւնը:

Գնա՛ ոչնչացիր, երկիրը ոռոգիր արիւնովդ, թող խլեն զաւակդ, բռնաբարեն կինդ, գլխիդ փլեցնեն տունդ, դատարկեն ամբարդ և ուտեն քրտինքդ... ոչ ոք քեզ վերայ մի կաթիլ արցունք չի թափիլ, որովհետ'և մեռնելովդ ուրիշի տեղը կը լայնացնես, որովհետև ապրելդ չէ որ շահ է բերում մարդկանց, այլ մեռնելդ: Քեզ վերայ լաց լինողը —շատ շատ—պատմութիւնը միայն կը լինի, բայց այդ նոյն իսկ պատմութիւնը, եթէ անաչառ է, կը կնքէ քեզ" թոյլ. գոյութեան կռուի համար անընդունակ, ստոր և ոչնչանալու արժանի անձ„ տիտղոսներով, յետոյ մի քիչ կը ցաւի և կանցընի...

Ընկնելդ, ոչնչանալդ, արցունք անգամ չի առաջացնիլ: Քիչ մարդիկ —քեզնից զօրեղ մարդիկ—ոչնչացան, մեռան և անյետացան... ո՞վ է նրանց վերայ այլ ևս լաց լինում:

Եւ եթէ ինքդ չես որ քեզ վերայ մտածես, կեղծաւոր խնամակալների ծածկուած

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Փայտակարան կամ Ղարադաղ գաւառը

Ասրանը Քէյվանի հայ գիւղերի մէջ ամենալաւն է, իւր դիրքով, արտերով եւ ջրերով: Դիւղն ընկած է մի մեծ տափարակ տեղ. տների կողքից սկսած մինչեւ մի քանի մղոն հեռու՝ իրար կպած արտեր են այնպէս որ, նայողը կարծում է թէ այդ ամբողջ տարածութիւնը մի արտ է եւ մի մարդու է պատկանում:

Ասրանն ունի 20 տուն, պարապւում են երկրագործութեամբ:

Ասրանից դուրս գալով, ճանապարհուեցանք դէպի Մհդա կամ Մահդան. անցնելով ասրանցոց ցորենի միջով, որոնց բարձրութեան միջից մենք եւ մեր ձիերը չէինք երեւում. արտերից դուրս գալով մտանք մի փոքր մացառոտ ու խոտաւէտ տեղ, որի միջով անցնում էր մեր ճանապարհը եւ որտեղ էին հայ եւ Թուրք հովիւները իրանց հօտերով: Հովիւներից փոքր ինչ հեռացած, պատահեցինք մի խումբ հայ կանանց, որոնք գնում էին դէպի հովիւները դաղանակ եւ բահ ու բրերով, կանանց յարձակողական ընթացքը տեսնելով, մենք եւս դարձանք եւ գնացինք նրանց հետ, տեսնելու թէ ինչ կար: Կանանց խումբը հասաւ հովիւների մօտ, եւ յարձակուեցան բիչ հեռու գտնուած մի Թուրք խմբի վերայ. Թրքերը տեսնելով որ իրանց վերայ յարձակողները կանայք են, փախչիլ սկսեցին, բայց հայ կանայք հետեւներից հասնելով, ոմին Թակեցին եւ որին Թեւ ու գլուխը կոտրեցին: Թուրք տղամարդը Թէպետեւ չէր ուզում կնոջ հարուած տալ բայց եւ չէր ուզում կնոջից հարուած ստանալ: Եթէ մէկը համարձակւում էր ձեռք բարձրացնել կնոջ վերայ փայտակարանցուհին պաշտպանում էր իր գլխի «դոստակով», որը սաղավարտի էր նմանում եւ նորա վերայ ձգած „լաչակով», որ զրահի էր նմանում:

Կանանց կռուի պատճառը հետեւեալն էր, նոյն Մեհդաւցոց եւ Թուրք հովիւները կռուելով, Թուրք գիւղացիք եկել եւ հայ հովիւներին Թակել էին, հայ հովիւներն էլ իրանց գիւղացւոց օգնութեան էին կանչել, բայց որովհետեւ գիւղի արական սեռը ցրուած էր արտերն ու դաշտերն, կանայք օգնութեան հասան, որոնք Թրքերին շարդելով դարձան Մհդաւ:

Սորանից երեւում է որ դարադաղցի՝ կինը ինչպէս որ վար ու հունձի ժամանակ, նոյնպէս եւ կռուում օգնում է իւր ամուսնուն:

Մհդաւն ունի 14 տուն որոնք նոյնպէս պարապւում են երկրագործութեամբ. Այս տեղից էլ գնացինք Նորաշէն, որը նոյնպէս բաղկացած է 14 տնից:

Նորաշէնից գնացի Աշրաֆ գիւղ. Աշրաֆը էլ Ասրանի պէս ընկած է լայն դաշտի վերայ եւ ունի արդաւանդ վարելահողեր. ունի 17 տուն: Մի օր էլ այստեղ մնալով ճանապահուեցանք դէպի Դուկէ-Դարա, հայաբնակ գիւղը:

Դուկէյ-Դարան էլ ունի արդաւանդ վարելահո-

կուլ տալով բել անից խուսափես, եթէ, վերջապէս ինքդ չես որ լաց լինես ծիծ ուտելու համար, քեզ վերայ ոչ ոք չի մտածի, քեզ ոչ ոք ծիծ չի տայ։

Որովհետև ինքնագոյութիւնն ու կեանքը մուրացկանութեամբ չէ որ պահպանվում է կամ ստացւում այժմ, այլ ուժով է որ խլվում է։ Ո՞վ իր արիւնը երախկց քեզ կը տայ քո փոխարէն։

Ոչնչացիր, մեռիր քանի որ ապրել չը գիտես, ինքնաօգնութիւն չունիս, քանի որ դանդաղ ես, տիրայուական, սրօգրեսի անընդունակ և ժամանակի ու գոյութեան կռուի պահանջների համար անպատրաստ։

Եւ մեռնում, ոչնչանում ես ահա, քանդվում, աւերվում են քո տունն ու տեղը. քո կինը ու աղջիկը պղծըվում են անպատիժ, քրտինքդ էլ խլուելուց յետոյ արիւնովդ ներկւում տանդ փլատակները։

Մեռնում ես երկրիցդ հեռու, թշվառութեան և կեղտի մէջ ծիւրվում, տնիցդ ու տեղիցդ տարագիր, որպէս մի որբ... և ոչ ոքի փոյթը չէ այդ, մի անգամ ընդ միշտ ապահով գիտցիր։

Միթէ ուրեմն քեզ ոչնչանալ է վիճակուած, թշուառ անձ, միթէ այն, ինչ որ էլ ցոյց ես տալիս երբեմն, նմանում է մարող ճրագի վերջի բոցափայլութեան։

Ո՛չ, յուսահատութիւը փոքրոգութիւն է. ճակատ պէտք է ունենալ, գլուխ հարկաւոր է բռնել։ Կեանքը կարմիր է սիրում, ապրելու համար մեռնել գիտենալ է պէտք։

Միայն թէ հարկաւոր է գործել, շարժել անդամները և ման գալ ու շնչել։ Փոքր մի ևս և ուշ կը լինի։

Ժամանակ է բացարձակապէս մի կողմ դնել ամէն հարց, ամէն, ամէն... և բոլոր ուշադրութիւնը, կամքն և միջոցների մէջ եղող շարժումը՝ կեդրոնացնել քո գոյութիւնը պահպանելու խնդրի վրայ։

Երբ մարդ մեռնելու վտանգի մէջ է, նա այլ ևս ո՛չ քարոզների պէտք ունի, ոչ երեմեական ողբերի և ոչ էլ խրատների. նրան հարկաւոր է դեղ—դարման, շօշափելի, ներգործող ազդու դեղեր, որոնք ետ պահեն նրան մեռնելուց, կեանք տան նրան։

Հերիք եղան կաթուղիկոսից սկսած մինչև յետին տիրացուի կանացի անմիտ ողբերը. բաւական է ինչ մեր սև ագլուխները կլանեցին մեր սիրտն և ոյժերը՝ իրենց խաւար խորհուրդներով։ Մեզ պէտք չեն այժմ թուլամորթ և միմիայն լացել գիտցող կաթուղիկոսներ, եպիսկոպոսներ... որոնք իրենց պէս ապաբաշխների են ուտեցնում մեր դրամական ոյժը, մերժում են օգնելու մեր սովատանջ եղբայրներին, մերհարստութիւնն են ուտում, մեր գործերը ապականում և մեզ անմիտ ողբերով ու խրատներով կերակրում։

Մեզ այլ ևս պէտք չեն արտասւող հայրիկ—մայրիկներ։

Ժամանակ է ինքնաօգնութեան, կամ այժմ կամ երբէք։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Նամակ Մարաղայից

—

Համեմատելով Սօվուջբուլաղի քիւրդը իւր դրացի համազարմ մի քանի վայրենի ու կիսավայրենի ցեղերի-մանգուրների, միմաշների, դովուրքների և տաճկահպատակ քիւրդի հետ, պէտի ասել որ առաջինը վերջինների մօտ մի քաղաքակրթուած տարր է կազմում։ Այսօր Սօվուջբուլաղցի քիւրդը հիմնած ունի տաճկական մեթոդով բազմաթիւ մզկիթներ, ուր հաւաքուելով քիւրդ մանուկները, ուսանում են արաբական և պարսկական լեզուներով։

Քառասնական թւականներում հայ ազգաբնակութեան թիւը հասնում էր այստեղ 200 տուն ընտանիքի, բայց վերջերս զանազան ստիպեցուցիչ պատճառները հարկադրւում են նրանց այլ և այլ հայաբնակ վայրեր տեղափոխուելու։ Հայերի գլխաւոր զբաղմունքներն են երկրագործութիւն, հիւսնութիւն և վաճառականութիւն։ Վերջին զբաղմունքով պարապւողները բոլորն էլ դավրիժեցի և ղարաբաղցի գաղթականներ են։

Սօվուջբուլաղի բնիկ հայը, ընդամենը 9 տուն ընտանիք է, քաջ է, անվեհեր և վեհանձն։ Այդպէս չէ Մարաղայի հայը, նա երկչոտ է, ստոր և ստրուկ։

Առաջինը գիտէ լաւ պաշտպանել իւր անհատական մարդկային իրաւունքներն ու արժանաւորութիւններն, իսկ երկրորդը, ընդհակառակն, իւր ստոր դիրքովը պատճառ է դառնում իւր քաղաքացիական իրաւունքների և մարդկային արժանաւորութիւնների ոտնակոխ լինելուն։ Առաջինը ընկերասէր է, մարդասէր, և ծայրահեղ հիւրասէր։ Երկրորդը անձնամոլ է, փողապաշտ և չափազանց անհիւրընկալ։ Առաջինը ամենայն դէպքում իւր ընկերոջ, ընտանիքի, ազգի և վերջապէս հասարակութեան պատիւը պահպանելու համար պատրաստ է դիմելու ամեն տեսակ զոհողութիւնների, իսկ երկրորդի մօտ ազգ, ընկեր, հասարակութիւն, ոչինչ բան նշանակութիւն չունի, նա ապրում է լոկ իւր և իւր զզուելի փորի, գրպանի համար։

Սօվուջբուլաղի շրջակայ գաւառներում Նազարբէկեանները ունին 18 չափ կապալով վերցրած քրդաբնակ գիւղեր։ Սօվուջբուլաղի վաճառական դասակարգը թղթախաղութիւնն ու նարթախթայի խաղը արհեստ է դարձրել իւր մէջ։

10—15 հոգուց և ոչ մինը մի հայկական լրագիր չ՛ը ստանում, չը նայած որ բոլորն էլ քիչ ու շատ, չասենք կրթութիւն առած, գէթ կանոնաւոր գրագէտ մարդիկներ են։

Սօվուջբուլաղի փոքրաթիւ հայ հասարակութեան կրթական վիճակը աննախանձելի է, նա ցայժմ չէ ունեցել և չունի ազգային մի դպրոց, ունի

ղիր, փոքրիկ գետակներ, որոնցով գիւղացիք ջրում են իրանց բոստանները: Սա էլ ունի 20 տուն:

Դուկէյ-Ղարիզ գնացի Ղասումի չէն կամ Մելիք Ղասմա. Սա էլ առաջինների պէս լաւ դիրք ունի ջրերով եւ լաւ վարելահողերով. Ունի 25 տուն. ունին մի փայտաշէն եկեղեցի, որն ինչպէս առաջինները բոլորովին նմանութիւն չունի " եկեղեցու ոչ արտաքին եւ ոչ ներքին ձեւով:

Մելիք Ղասմից վերադարձանք Սղըն, Բէյվանի մայրաքաղաքը:

Սղրնն ընկած է մի լեռան լանջի վերայ, որից փոքր ինչ ցած—ձորակի միջով հոսում է մի առուակ, որի մօտ կայ մի փոքրիկ աղբիւր. Սղրնը համեմատելով Բէյվանի միւս գիւղերի հետ, բաւական պակասութիւններ ունի ջրի եւ վարելահողերի կողմից:

Սրընն էլ ունեցել է նշանաւոր մելիքներ, որոնք կոչւում են Մելիք Ջհանեանք: Սոցանից այժմ էլ կայ. Ղարադաղի Բէյվան գաւառակի հռչակաւոր Մելիք Սարգիսը, որ 1884 թուին Թրքական բարբարոսութեանց ժամանակ, երբ հայ օրիորդը բռնաբար իւր հօրեղբօր վերայ ուղղուած հրացանի առաջը Թաւ ու կանգնեց, իւր կրծքի մէջ ընդունելով հրացանի գնդակը, գետին գլորուեցաւ, ազատելով հօր եղբօր կեանքը: Դորանից յետոյ պատսահած շատ բարբարոսութեանց պատճառաւ Մելիք Սարգիսը Դավրէժ գնաց եւ երբ այնտեղից բաւականութիւն չստացաւ, զանազան մարդկանց օգնութեամբ Թէհրան գնաց ներկայացաւ Վեհ. Շահին եւ յայտնելով նորան Ղարադաղում Թրքաց բարբարոսութիւններն ու նեղութիւնները, ստացաւ Մելիքութեան հրովարտակի հետ եւ Բէյվանի իշխանութիւնը, որ մինչեւ այսօր էլ վարում է:

Մենք այստեղ վերջացրած համարելով Ղարադաղի չորս գաւառակների բոլոր հայ գիւղերը, հարկ ենք համարում ընդհանուր վերջնական հայեացք եւս ձգել նորանց վերայ:

—

Իմ ճանապարհորդութեան ժամանակ տեսայ Ղարադաղի բոլոր հայ գիւղերը, նոցա որքանութիւնը եւ պարապմունքը. բայց որովհետեւ մի քանի բաների մասին շատ քիչ տեղեկութիւններ եմ տուել ուստի այստեղ ուզում եմ լրացնել այդ պակասը:

Տիզմառ գաւառակը ունի 9 հայ գիւղ, որոնք ունին 360 տուն. Մեշափարան՝ 6 գիւղ 143 տուն. Մինջեւանը՝ 4 գիւղ 94 տուն. Բէյվանը՝ 9 գիւղ 276 տուն, որոց միագումարը լինում է 28 գիւղ 873 տուն: Ղարադաղի իւրաքանչիւր տունը պէտք է հաշուել 7 հոգի, այս հաշւով ամբողջ Ղարադաղը կունենայ 6111 հայ բնակիչ:

Ղարադաղցւոց գլխաւոր պարապմունքը ինչպէս տեսանք, երկրագործութիւնն է, որն անում են նահապետական ձեւով, առանց մի որեւէ փոփոխութեան:

Արհեստը շատ նուազ է Ղարադաղցւոց մէջ. իւրաքանչիւր գաւառակի մէջ կայ մէկ կամ երկու դարբին, որոնք շատ հարկաւոր են երկրագործական գործիքների համար. նոյնչափ էլ ոսկերիչներ, հրացանագործներ, «ղունդաղսազներ», ջհուլներ,

միայն մի ցեխաշէն, նորակառոյց եկեղեցի առանց զարդի և քահանայի. Հարկ եղած ժամանակը քահանան բերել են տալիս Սուլդուզից։ Դավրէժի ամերիկացի բողոքական միսիոնարք չունին այստեղ դպրոցի համար յատուկ կառուցրած մի շէնք, միայն երբ քէֆները ուզում է ուսուցիչ պահել այստեղ, վարձում են մի տնենեակ, և ուսուցչութեան պաշտօնով ուղարկում են իրանց դպրոցի ընթերցաւարտ աշակերտներից մինը, որը մի քանի ամիսներ միայն գլաղուելուց յետոյ թողնում հեռանում է, այդպիսով էլ դպրոցը շարունակուել չէ կարողանում։

Մի քանի անգամ յիշեալները այդպէս արել են, այսինքն մի տարի ուսուցիչ ուղարկել են, իսկ միւս տարին ո՛չ։

Օրօր.

Նամակներ խմբագրութեան

Դավրէժ 21 Նոյեմբ. 94

„Շաւղի“ № 42-ի մէջ, Ս. Միրզայեան ստորագրութեամբ, երբ թէ մի հերքում է տպուած իմ „Շաւղին“ տուած այն լուրի դէմ, որ վերոյիշեալ պարոնը, չը գիտենք՝ ուղեղային ո՛րպիսի դրութեան մէջ՝ իւր բարեկամներից մէկի տանը, ատրճանակ էր պարպել մի երիտասարդի վերայ, ժողովի անունով հրաւիրելով նրան այնտեղ (մի քանի կոպէկների հաշուի պատճառաւ)։ Այո՛, այդ լուրը տալով „Շաւղին“, մենք ուզում էինք մի բարոյական ապտակ տալ „Սէր“ ընկերութեան „Նախագահ“ փ ք ո ւ ն անունը կրող պատանուն, կարծելով թէ նա բարոյական ապտակներից կարմրող մարդ է, որ և կաշխատի միւս անգամ հեռու պահել իրան այդպիսի ընթացքից. բայց պարոնը փոխանակ ամաչելու իւր սրիկայական արարքի վերայ, փոխանակ զգալով իւր սխալը՝ թոյլ է տալիս իրան հրապարակ դուրս գալ, և տեղ-տեղ հասարակական կեանքը իւր ներկայութեամբ, իւր եզական արարքներով սրբապղծելուց զատ, սրբապղծել և մամուլը, այն սրբավայրը, որին մերձենալու համար՝ նախ պէտք է մարդ դառնալ և ապա մօտենալ, եթէ ո՛չ՝ նա մի կղկղանք է, որ կայրէ նտախօս շրթունքները։

Մենք շատ լաւ գիտէինք, որ, Միրզայեան Սեդրակը թոյլ կը տայ իրան հասարակական կեանքում ամեն տեսակ աֆէրիստութիւնների դիմել, բայց լրագրութեան մէջ, հրապարակապէս դուրս գալ աֆէրիստութիւնը պաշտպանելու նորանոր աֆէրիստութիւններով և սոփեստութիւններով— այդ մենք երբէք չէինք կարող երևակայել, թէ մի անմըտութիւն ծածկելու համար նա թոյլ կը տայ իրան եզուիտական՝ այնպիսի միջոցների դիմել, որպիսին իրանց թոյլ տալ կարող են հասարարակութիւնից արհամարհուած մի որոշ՝ գիշերային պարապմունք ունեցող դասակարգ. պարոնը եթէ ի նկատի է ունեցել, որ մենք այդ փոքրիկ լուրով կամենում ենք կառավարութեան ուշադրութիւնը հրաւիրել, քնչու ապա ինքը իւր, և „Սէր“ ընկերութեան երեւակայեալ գործունէութեան մասին այնպիսի տեղեկութիւններ է տալիս լրագրութեամբ, որոնց մասին մինչև այսօր ոչ ոք չի լսել. և այդ բոլոր անողը հրապարակապէս ինքն է, որ կարող էր կառավարութեան ուշադրութիւնը հրաւիրել, նա ինքը շատ լաւ գիտէ, որ այդ լուրը տալով մենք ինչ բարոյական նպատակ ենք ունեցել. բայց պարոնը ժողովրդի աչքին թող փչելու համար, թոյլ է տուել իրան այդպիսի կերպարանք տալ, հետևելով իրան կուսակից պարագլխի այն սառը օրինակին, որ մէկի հետ չը կարողանալով գաղափարական կռիւ մղել, յանդգնում է ժողովրդին խաբելու համար հայհոյանքներ թափել, մատնիչ ներկայացնել և այլն։ Ներկայացնելով պարոնի միտումները, մենք մի հարց կը դնենք միայն, թէ ճիշդ չէ՞ արդեօք մեր տուած լուրը „Շաւղին“։

Այդ հարցին, որ Ս. Միրզայեանը „ինքնահնար“ է համարում, թող մի անգամ ևս յիշէ որ բառարանի մէջ „ազնուութիւն“ մի բառ կայ, և սպա խոստովանուի ճիշդ է, թէ ինքնահնար։ Բայց որովհետև, ինչպէս երևում է, նա այդ բառը առաջին անգամն է լսում, հրաւիրում ենք իրան ակնարկած ուսուցիչ Գ. Գօլուխանեանին, որին ինքը մի ազնիւ երիտասարդ է ճանաչում, հրաւիրում ենք Հ. Ա.-ին, որի վերայ նա պարպել է ատրճանակը և առհասարակ այն բոլորին, որոնք գիտեն այդ բանը, հրապարակաւ յայտնել ճիշդ է մեր տուած լուրը, թէ ոչ, և թէ մեզանից ո՞րն է ստախօս, խաբեբայ։

Գ.

Թեհրան 1 Նոյեմբ. 94

„Շաւիղ“ պատուական թերթի վերջին համարում հետևեալն ենք կարդում „թէ Վանաքի դասատուն թողել է իւր պաշտօնը իրա ռոճիկները չը ստանալու համար“։ Առ այժմ մենք բաւականանում ենք հետևեալ խօսքերն ասելով միայն՝ Ո՛չ, այդ չէ այն առաջին և գլխաւոր պատճառը որի պատճառաւ ուսումնարանը փակուեցաւ. ուսումնարանը փակուեցաւ աւելի նրա ներքին և արտաքին գործոց անկարգ—անկանոնութեանը համար։ Յուսով ենք որ նորընտիր մարմինը կը բարեհաճի օր առաջ ձեռնարկել ուսումնարանի երեսի վերայ ձգուած գործերը կանոնաւորելու, և այդպիսով դասախօսութիւնը կրկին կը շարունակուի։

Մնացական Մանգասարեանց.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Դավրէժից մեզ հաղորդում են հետևեալը՝

վերջինս դրեթէ միծամասնութիւնը գիտէ՞ բայց կիսատ ու կոպիտ ձեւով:

Վերջերս սովորութիւն է եղել պանդխտութեան գնալ, որ 20 տարի առաջ ղարադաղցւոց համար մի օտարոտի բան էր թւում, բայց այսօր այնքան սովորական է դարձել, որ 8-10 տարեկան երեխայից սկսած մինչեւ 50 տարեկան ծերերը գնում են, թողնելով իրանց հայրերը, ընտանիքը, տուն ու տեղը անտէր եւ պանդուխտ երկրի մէջ հալւում մաշւում են: Սոցանից Տիգմանի, Միշափարի եւ Մինջուանի փոքրիկները գլխաւորապէս ուղարկւում են Դավրէժ ասելով. «Գնա՛ որդի, քաղաքավարութիւն սովորիր, մարդ դարձիր»: Բայց որտեղ պէտք է քաղաքավարութիւն սովորէ, Դավրէժի փողոցներում թափառելով, մինչեւ մի տեղ գտնելը խոհանոցի անկիւնում. շատերը տարիներով ծրիապէս ծառայում են, թէ ինչ է տան տէրը ամսէն մի անգամ մայրենի լեզուի վերայ մի կիսատ դաս տալով նորան կարդալ գրել պէտք է սովորեցնի. խեղճ պատանի, ի զուր տեղ փչանում է առանց մի բան սովորելու. քչերն են պատահում. այն էլ հարուստի որդիք, որ կարողանում են ուսումնարան մտնել:

Սրեք դաւառակի հասակաւորները եւ Փէյվանի թէ մեծ եւ թէ պզտիկը գնում են Ռուսաստան, գլխաւորապէս Շուշի, Թիֆլիս եւ Բագու քաղաքները: Սոցանից ոմանք պարապւում են ծառայութեամբ, ոմանք մշակութեամբ եւ մի մասն էլ զանազան արհեստներով:

Ղարադաղցւոց մի մասն էլ, որոնք շատ ու քիչ կարդալ գրել գիտեն եւ կամ փոքր ինչ հարստութիւն կամ դրամ ունին պարապւում են շարժական մանրավաճառութեամբ:

Կանայք տնտեսական գործերը կատարելուց յետոյ, օգնում են իրանց ամուսիններին վար ու ցանքի մէջ. պատրաստում են լաւ կտաւեղէն. բրդէ շալեր, որոնցից շինում են իրանց համար հագուստներ գորգ, կապերտ եւ այլն:

Ղարադաղն ինչպէս տեսանք, զուրկ է վարժարաններից, եւ արժանաւոր եկեղեցականներից. Ադաղանից սկսեալ մինչեւ Սղրն 28 գիւղերի եւ ոչ մէկի մէջ ես չը տեսայ ոչ մի վարժարան եւ ոչ էլ մի արժանաւոր քահանայ:

Ճանապարհորդութեանս ժամանակ ամեն տեղ խօսելով ուսման վերայ, տեսայ, թէպէտ եւ ոչ բոլորը, բայց մեծամասնութիւնը հասկանում են, որ իրանց որդւոց պէտք է ուսում, կրթութիւն եւ թէ իրանք ցանկանում են մի օր առաջ ունենալ այդ բոլորը, բայց ինչ անեն, ինչպէս կարող են ունենալ... Ղարադաղցւոց մեծամասնութիւնը թէպէտ եւ աղքատ են, բայց իրանց որդւոց կրթութեան տալու համար ծեռքից եկած ծախսը երբէք չեն խնայել. սիրով ու քաղցրութեամբ կը տան, այնքան լինի որ որդիները կարդալ գրել սովորեն:

(Կը շարունակուի)

ւեալ լուրերը։ Բերդաձաղի ուսումնարանից զուլսեկա ծվեց Հոգի ուսուցիչները էլի ընդունուեցան գիջանելով տեսչի բոլոր պայմաններին անպայման։ Օրօրի վերայ Բերդաձաղի Հոգաբարձութեան յարաբերութիւնը քանի գնում է աւելի և աւելի սուր կերպարանք է ստանում մեր առաջնորդի հետ։

—

Հաստատ աղբիւրներից լսում ենք, որ Պ. Գ. Թումանեանցը իւր ծախքով յանձն է առել շինելու Լիլաւայում օրիորդաց դպրոց՝ իւր հանգուցեալ հօր և քրոջ յիշատակը յաւերժացնելու համար։

—

Հաստատ աղբիւրներից լսում ենք, որ Սալմաստի առաջնորդական փոխանորդ, Արսէն աբեղան, Աստուծոյ սեղանից յորդորներ կարդալու փոխարէն, զանազան յիշոցներ է ուղղում ժողովրդի հասցէին, որոնց ժողովրդին սարսափելի կերպով գրգռել է իւր դէմ։ (Չենք զարմանում. ծան. խմբ.)։

—

Այս օրերս Մակուի հողով անցան մի ստուար խումբ բուլանդցի գաղթականներ՝ դէպի Ռուսաստան։ Մի ականատես խօսելով գաղթականների հետ, պատմեց մեզ հետևեալ սրտաճմլիկ իրողութիւնը, որ երբ նրանք գիշերով անցնելիս են եղել պարսից սահմանը, քիւրդերը նրանց հետևից հասնելով խլում են գաղթականներից 10 կոյս աղջկերք, բռնաբարում են շատ հարսներ, սպանխողխող անում 115 հոգի կանայք, երիտասարդներ և երեխաներ։

—

Ներկայ ամսից բացուել է „Հայուհեաց“ ընկերութեան արհեստանոցը, աշակերտուհիների թիւը հասնում է 25-ի, ուսանդւում է այս տարի ձև, կար, հարթակար և ձեռագործ։ Մտադրութիւն կայ գործագործութիւն էլ մտցնելու. վերջապէս կանանց ընկերութիւնը կարողացաւ յաջողացնել, իւր հաւաքած փողը սովեալների օգտին՝ ուղարկել, ուր որ հարկն էր։

—

Նոյեմբեր 18-ին տեղի ունեցաւ պ. Հ. Թումանեանցի հարսանեաց հանդէսը՝ օրիորդ Նիկդար Ամատունեանի հետ։ Թումանեանները փոխանակ ճաշեր սարքելու մի քանի օր, 500 թուման նուիրեցին Բերդաձաղի և 500 Լիլաւայի ուսումնարաններին։ Շատ գովելի է եղ. Թումանեանցների այդ գործը, որ կարող է օրինակ ծառայել նոյն իսկ մեր ռուսահայ հարուստներին։ Թումանեանցները յայտնի են իրանց առատաձեռնութեամբ և ուրախութեամբ արձանագրում ենք նրանց այս նոր արածն էլ։

—

Անցեալ հինգշաբթի օր Վեհափառ Շահը բարեհաճեց իւր Բարձր այցելութեամբ պատուել քաղաքիս ղազախանէն։ Այցելութիւնից յետոյ, կրթութեան հրապարակում յատուկ իւր համար պատրաստուած վրանի տակ հանգստանալով, ականատես եղաւ կոզակների վարժութիւններին։ Գալոց երկուշաբթի էլ Ն. Վեհափառութիւնը պիտի այցելէ, արքունական բազմարուեստեան դպրոցը։

—

Էնզէլիում պատահել է մի մեծ հրդեհ. այրուել են 200 խանութներ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Այս շաբաթուայ թերթերը հաղորդում են մեզ մի քանի ուրախալի լուրեր։ Վաղուց արդէն գիտեն բոլորը, որ նշանաւոր, շատ կատաղութեան դարմանը գտնող, միկրոպների աշխարհը երեւան հանող Պաստէօրի աշակերտ դոք. Րուին գտել է դիփտերիտի դէմ պատուաստումը։ Իսկապէս ասած, գիւտը վերաբերում է գերմանացի պրոֆ. Բերինգին, բայց յաջողութեամբ գործադրողն է Րուին։ Դիփտերիտով հիւանդներին նա պատուաստում է արեան շիճուկով, միայն թէ ձիու արեան շիճուկով։ 1894 թուի դոք. Րուի արած փորձերը շատ յաջող են գնում։ Ամեն երկիր այժմ սկսում է գործադրել այդ միջոցը. Թիֆլիսի բժշկական խորհուրդն էլ զբաղուած է դրանով։ Ֆրանսիական „Ֆիգարօ“ թերթը որ սկսել էր նպաստ հաւաքել այդ գիւտի համար մի հաստատութիւն ունենալու նպատակով, գումարը հասցրել է 431,197 ֆրանկի։ Ստացած վերջին մի տեղեկութիւնից էլ երևում է որ Հալլէ քաղաքի (Գերմանիա) պրոֆ. Բերինգը (որին են վերագրում դիփտերիտի պատուաստելու գիւտը) գտել է այժմ տիֆի դէմ դեղ։

Պատուաստման դարումն ենք, անշուշտ շուտով խօլերայի պատուաստն էլ կը գտնուի։

Արդեօք չի՞ լինիլ որ մի բարեգործ պրոֆեսոր էլ մի պատուաստումն գտնէր ընդդէմ հայկական ստրկական և գծուծ ոգու, մի ուրիշն էլ մանաւանդ՝ ընդդէմ պարազիտութեան։ Որպիսի՜ մեծ օր կը լինէր այդ օրը։

Ինչպէ՞ս գծուծ յանուանես հային. օրինակ քեզ Մարսիլիայի „Արմենեան“, որ գնացել նստել է ազատ երկիր, յանուն յեղափոխութեան փողեր է հաւաքում և մէկը միւսի ետևից այնպիսի համարներ է դուրս տալիս, որ մարդ մտածում է յեղափոխութեան լիովին հակառակ մի բանի վերայ, երբ այդ թերթերը կարդում է։ Չէ՞ք հաւատում, թերթեցէք № 31-ն էլ (ամենավերջին համարը), մի բառ կը գտնէ՞ք յեղափոխութեան համար։ Դորա փոխարէն ահա թէ նա ինչ է բարբանջում։

«Արմենեան ազգին՝ զգուշական խորհուրդներ է տուել որ չը խաբուի պոռոտախօսներից, կեղծ հայրենասէրներից (երևի ինքը խակականն է), չընկնի նրանց լարած ծուղակի մէջ, մատնանիշ է արել նրանց բռնած ուղղութիւնը, ձեռնարկած գործերի ունեցած ծրագիրների բոլոր վնասակարութիւնը»!!.,

O Sancta Simplicitas!

Այո՛, խաբեբաները հէնց այդպէս են անում իրանց խաբեբայութիւնը այդպիսի խօսքերով ճարպկութեամբ քողարկելու համար։

Յետոյ երբ այդ „կատաղածներ“ վերնագրով յօդուածը վերջացնում է, գոչում է՝

«Եթէ խօսք ունիք, ազնիւ կերպով հրապարակ դուրս եկէ՛ք եւ առանց ստախօսելու, զրպարտելու, հայհոյելու, ճշմարիտ փաստերով եւ ապացոյցներով խօսեցէք»

Այդքա՜ն կեղծութիւն. իւր շանտաժիստութիւնը երեսին են տալիս ակներև փաստերով և նա դեռ ասում է „ցոյց տուէք“։ Էլ ի՞նչ ցոյց տալ, քո կրօնա—վաճառականականուղղութիւնդ, քո յեղափոխական անունով փողեր հաւաքե՞լդ. Ինչո՞վ ես ցոյց տալիս որ յեղափոխութեան ես ծառայում. նրանով, որ Մարսէյլ ես հրատարակւում և ո՛չ Թիֆլիսում...

*** „Նոր-Դարը“ այս անգամ մի ճիշդ լուր է հաղորդել Դավրէժից գրուած. այն է որ՝

«Արամեան դպրոցի ուսուցիչների եւ հոգաբարձուների մէջ խռովութիւն ծագելով, ուսուցիչները, որոնք կազմուած էին զանազան դրաշարներից (դրաշարը մնացել է, այդ մէկը ստում է) եւ այլ թերթու համբակներից (այս ճիշդ է, բոլոր Նոր-դարականները փնտռել են) արձակուած են»

Տես այդ մասին „Շաւիղ“ № 44-ի Դավրէժից թղթակցութիւնը։

*** Թերթերը տխրութեամբ հաղորդում են որ նոյ. 8-ին վախճանուեց աշխարահռչակ կոմպոզիտէօր—պիանիստ Անտոն Ռուբէնշտէյնը։ Այս մեծ երաժիշտը, Լիստից յետոյ համարւում էր աշխարհիս ամենաառաջին դաշնակահարը։ Նրա գրած նշանաւոր օպերաներն են «Դէմօն», «Մակաբէյ», „Ներոն» եւ այլն։ Ունի շատ ուրիշ գրուածքներ, որոնք խիստ ընդունուած են երաժշտական աշխարհում։

*** „Նոր-Դարին“ խոշոր տառերով հեռագրում են, որ Վ. Հայրիկը, հայոց կաթուղիկոսը, Թիֆլիս է գնալու՝ այժմ արդէն գնացած կը լինի։

„ՇԱՒԻՂԻ“ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Դավրէժ. Ց-ին. Ձեր նամակը թէեւ տպեցինք. բայց այդ չէ նշանակում որ ուրիշ անգամ կը համաձայնուինք տպագրել այդ աստիճան կրքոտ խօսքեր։ Ճշմարտութիւնը հարկ չունի այդ տեսակ պաշտպանութեան։ Եթէ կամենումէք որ ձեր նամակները տպագրուին, մեղմ եղէք եւ ոչ կրքոտ. մենք ձեր ճշմարտախօսութիւնը գիտենք եւ վստահ ենք նրա վերայ։ Թողէք աֆերիստներին։ Գրեցէք ուրիշ բաների մասին, միթէ գրելիք չունիք այլ եւս։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընթերցասիրաց Ընկ. գրադարանի յարգելի անդամակիցներին և ընթերցողներին խնդրում ենք շնորհ բերել Հայկազեան ուսումնարան, առաջիկայ կիւրակի դեկտ. 4-ին ժամը 3-ին, գրադարանի մասին խորհելու։ Ներկայութիւնը անհրաժեշտ է։

Արտօնատէր—Հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ